ՍԱՎՎԱ ԱՂՈՒՐԻԴԻՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԼԵՌԱՆ ՔԱՐՈԶԻ
(Բանասիրական և պատմական խնդիրը)

Հին Կտակարանի առաջին հինգ գրքերը պարունակում են պատմողական նյութ: Նրանց հիմնական բնութագիրը, սակայն, այն է, որ ընդգրկում են Իսրայելի ողջ օրենսդրությունը: Այդ իսկ պատճառով կազմում են մի ամբողջություն և կոչվում՝ Հընգամատյան: Թվում է, թե Մատթեոսն էլ իր Ավետարանը բաժանել է 5 առանձին բաժինների (Գ 1—Է 29, Ը 1—ԺԱ 1, ԺԱ 2—ԺԳ 53, ԺԳ 54—ԺԹ 1, ԺԹ 2—ԻԶ 1): Այս բաժիններից յուրաքանչյուրը ունի մի պատմողական մաս և որից հետո՝ մի ուսուցողական մաս: Ուսուցողական մասերը Հիսուսի՝ տարբեր առիթներով խոսված ուսուցումների հավաքածուներ են: Արդյո՞ք Մատթեոսը իր Ավետարանի վերոհիշյալ բաժանումը համապատասխանեցրել է Եբրայական Հնգամատյանին: Այդպես են ընդունում շատ մեկնիչներ: G. Bornkamm-ը, օրինակ, նշում է, թե Լեռան քարոզում Հիսուս «Լոգոսի Մեսիան է», իսկ Ը—Թ գլուխներում՝ «Գործի Մեսիան», և թե մովսիական ձևաբանությունը, այսինքն Մովսեսի խոսքերը և գործերը իբրև նախատիպ Իսրայելի ապագա ազատարարի և փրկչի, այստեղ խաղում է կարևոր դեր, և որ Հիսուսի խոսքերը հիշեցնում են Հնգամատյանը[1]: Այլ մեկնիչներ, սակայն, ընդունում են պարզապես, որ այդ հայեցակետը պարունակում է օգտակար տարրեր Ավետարանի համադրությունը ըմբռնելու համար, որոնք, սակայն, բավական չեն բացատրելու համար գրության ձևի խնդիրը: Մովսիական ձևաբանությունը Մատթեոսի աստվածաբանական մոտիվներից մեկն է, սակայն ոչ միակը: Այս բավական հստակորեն արտահայտել է իր գրքում W. D. Davies[2]-ը: Այլ աղբյուրներից բացի Մատթեոսը իր Ավետարանի գրության համար օգտագործել է (ինչպես և Ղուկասը) ըստ Մարկոսի Ավետարանը, ինչպես նաև մի այլ գրավոր աղբյուր՝ «Խոսքերը», որը պարունակում էր հիմնականում Հիսուսի վարդապետությունները: «Խոսքերի» գոյության մասին վկայում են նաև եկեղեցական հին աղբյուրներ[3]: Ըստ Մատթեոսի Ավետարանի պատմողական մասերը, որոնց մասին հիշատակեցինք վերևում, այլ բան չէ, եթե ոչ ըստ Մարկոսի Ավետարանի համապատասխան պատմողական հատվածների մի նոր խմբագրությունը, մինչդեռ Մատթեոսի ուսուցողական մասերը Ավետարանչի կողմից կազմված համադրություններ են՝ առնված հիմնականում «Խոսքերից»:

Այս համառոտ ուսումնասիրության մեջ չենք կարող տեղ տալ Մատթեոսի աղբյուր-

[1] G. Bornkamm, R.R.G.³, Bergpredigt, էջ 1046-ից:

[2] W. D. Davies, The Setting of the Sermon on the Mount, Cambridge—1964.

[3] Տես Σ. Ἀγουρίδου, Εἰσαγωγὴ εἰς τὴν Κ. Διαθήκην, Աթենք, 1971, էջ 106-ից:

[4] Այս մասին ավելի մանրամասն տես.

ա) Սավվա Աղուրիդիսի «Երանիները» («Οἱ Μακαρισμοί») ուսումնասիրությունը՝ տպված իր «Աստվածաշնչական ուսումնասիրություններ»-ի Ա հատորում, Թեսալոնիկի, 1966 թ., էջ 117—151.

բ) W.D. Davies-ի գիրքը.

գ) R. Schnackenburg-ի հոդվածը Lexikon für Theologie und Kirche-ում, 1958, Բ հատ., էջ 223 225:

ների հետ կապված խնդրաբանության մանրամասն քննությանը[4]: Սակայն քննելով Լեռան քարոզը բանասիրական տեսանկյունից, անհրաժեշտ է ասել երկու խոսք — ամենաանհրաժեշտները — ըստ Մատթեոսի Ավետարանում տեղ գտած Հիսուսի խոսքերի համադրության և հատկապես Լեռան քարոզի կազմության մասին:

Ա. ըստ Մատթեոսի Ավետարանի անգամ մի պարզ, բայց ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ ավետարանիչը շարադրում է իր պատմողական և ուսուցողական նյութը ըստ խմբերի: Անշուշտ հեղինակը տալիս է Դավթի որդու՝ Իսրայելի և ողջ աշխարհի Մեսիայի և Փրկչի՝ Հիսուսի պատկերը, պատմական զարգացող ընթացքի մեջ, որը վերցնում է Մարկոսից: Այդ, սակայն, իրեն չի խանգարում նյութի տեղաբաշխմանը՝ ըստ խմբերի: Այս փաստը նշանակում է երկու բան. ա) հեղինակին չի հետաքրքրում ո՛չ պատմությունը ըստ ինքյան և ո՛չ էլ պատմական մանրամասնությունները: Այն, ինչ որ ցանկանում է տալ իր ժամանակակիցներին և մեզ, Հիսուսի անձնավորության մի պարզ մեկնությունն է, մի պարզ պատկերը: բ) Ներկայացնում է Հիսուսի կյանքից իրական դեպքեր և նրա ճշմարիտ ուսուցումներ, սակայն ավետարանիչը նյութը համադրում է այնպես, որ այն ծառայի իր յուրահատուկ նպատակներին (ջատագովական, կրոնուսուցողական, ծիսական և այլն):

Լեռան քարոզը նույնպես ավետարանչի համադրությունն է. իր Ավետարանի Ա բաժնի պատմողական մասում (Գ 1—Դ 25) Մատթեոսը Հիսուսի Մկրտությունից և անապատում փորձությունից հետո ներկայացնում է Հիսուսի ծավալած գործունեության առաջին շրջանը՝ Գալիլիայում, առաքյալների ընտրությունը և ավարտում Հիսուսի ձեռք բերած փառքի մասին մի ընդհանուր ներկայացումով, իբրև ուսուցչի և բժշկի, այնպես որ հոծ բազմություն Պաղեստինի բազմաթիվ վայրերից հետևում էին նրան: Ե—Է գլուխներում, Ավետարանի Ա բաժնի ուսուցողական մասում, Մատթեոսը ներկայացնում է Լեռան քարոզը: Անշուշտ Հիսուս շատ անգամ է խոսել իր աշակերտներին և բազմամբոխ ժողովրդին Գալիլիայի բարձունքների վրա: Շատ հավանական է, որ ավետարանիչը «Խոսքերում» գտել է օրենքի և Ավետարանի կապակցության մասին Հիսուսի մի քարոզը խոսված Գալիլիայի բարձունքներից մեկի վրա: Սակայն միանգամայն անհավանական է, որ Հիսուսը մի անգամ, մի լեռան վրա, նույն լսարանի առջև ուսուցանել է ըստ կարգի, մեկը մյուսի հետևից, այն բոլոր բազմազան նյութերը, որ պարունակում է Լեռան քարոզը: Այն Ավետարանչի համադրությունն է՝ տարբեր առիթներով խոսված Հիսուսի վարդապետություններին: Այս է իրականությունը, որքան էլ որ այն դժվարացնի մեկնողի գործը՝ գտնելու համար Լեռան քարոզի մաս կազմող և միևնույն ժամանակ մի ամբողջություն կազմող ուսուցումներից յուրաքանչյուրի հնագույն պատմական միջավայրը:

Դժվար չէ ցույց տալ Լեռան քարոզի համադրական բնույթը. ա) Պարզ ընթերցողին իսկ բացահայտ է այս քարոզի ծրագրային բնույթը: Կարող ենք ասել, որ այս իմաստով Լեռան քարոզը Ավետարանի բոլոր քարոզներից ամենահատկանշականն է: Ուրիշ խոսքով, այս քարոզով Ավետարանիչը տալիս է Հիսուսի վարդապետության մի օրինակ՝ ի հակադրություն իր ժամանակի հրեա դպիրների կողմից Աստվածային Օրենքի մեկնության: բ) Այդ «Լեռը», որի մասին խոսվում է Մատթեոսի կողմից նաև այլուր (տես հատկապես ԻԸ 16 «այն լեռը, ուր Հիսուս իրենց հետ ժամադրվել էր») մի պարզ աշխարհագրական վայր չէ, այլ նաև աստվածաբանական: Սինայի վրա տրվեց Օրենքը հրեաներին, «Լեռան» վրա Հիսուսը, իբրև մի նոր Մովսես, տվեց Նոր Օրենքը: Հավանաբար նույն «լեռան» վրա հայտնվեց Հարություն առած Տերը Իր աշակերտներին, որպեսզի նրանց առաքի բոլոր ազգերին ուսուցանելու այն ամենը, ինչ որ պատվիրել է նրանց (Մատթ ԻԸ 20): Այսինքն մեր տեքստում ունենք ոչ թե մի պատահական, այլ սիստեմատիկ աստվածաբանական համադրություն: գ) Համեմատելով Մատթ. Ե—Է գլուխների ուսուցողական նյութը Ղուկասի Ավետարանում տեղ գտած (առնված դարձյալ «Խոսքեր»-ից) համապատասխան նյութի հետ, հաստատում ենք, որ Լեռան քարոզի նյութերը Ղուկասի Ավետարանում տեղադրված են միանգամայն տարբեր և բազմազան ժամանակագրական, տեղագրական և նույնիսկ աստվածաբանական շրջանակներում[5]:

[5] Այստեղ չենք ցանկանում խոսել զուգահեռ ուսուցողական նյութ ունեցող Մատթեոսի Լեռան քարոզի և Ղուկասի «մի տափարակ վայրում» խոսված քարոզի (Զ 17-49) կապակցության խնդրի մասին: Այս խնդիրը քննել ենք «Երանիները» ուսումնասիրության մեջ և եկել այն եզրակացության, թե այդ երկու տեքստերը միմյանցից տարբեր երկու քարոզներ են՝ խոսված տարբեր միջավայրերում, տարբեր նպատակներով, և որ Ղուկասի համապատասխան հատվածի նյութը բաղվածք է «Խոսքերից» և Ղուկասի մի այլ անձնական աղբյուրից (L.): Նշենք նաև, որ Եկեղեցու հին մեկնիչներից, ինչպես նաև

Համեմատել՝
Մատթ. Ե 13—Ղուկաս ԺԴ 34—Մարկոս Թ 50 (49)[6].

Մատթ. Ե 14(15)—Ղուկաս Ը 16 և ԺԱ 34 (33)—Մարկ. Դ 21.
Մատթ. Ե 25-26—Ղուկաս ԺԲ 58—59.
Մատթ. Զ 25-34 (25-33)—Ղուկաս ԺԲ 22-31.

Մատթ. Զ 22-33—Ղուկաս ԺԱ 34.
Մատթ. Զ 24—Ղուկաս ԺԶ 13 և այլն:

Այս զուգահեռ տեքստերի համեմատությունից երևում է, որ Մատթեոսը շարադրել է Հիսուսի խոսքերը, առանց անդրադառնալու այն որոշակի պատմական շրջանակներին, ուր Հիսուս ասել է այդ խոսքերը: Մինչդեռ Ղուկասը այդ խոսքերը օգտագործել է որոշակի պատմական շրջանակներում: Մի կողմ թողնելով վերոհիշյալ բոլոր զուգահեռների քննությունը, այստեղ ցանկանում ենք խոսել մի այլ օրինակի, գուցեև ամենացայտունի մասին: Ղուկաս ԺԱ 1 համարում ցույց է տրվում այն պատմական շրջանակը, ուր Հիսուս ուսուցանում է իր աշակերտներին Տերունական աղոթքը: Հազիվ Հիսուս ավարտել էր իր աղոթքը, երբ Իր աշակերտներից մեկը խնդրում է Իրեն սովորեցնել իրենց աղոթել: Այդպես է, որ առիթ տրվեց և Հիսուս ուսուցանեց Տերունական աղոթքը: Մատթեոսի մոտ, սակայն, երևույթները տարբեր են: Զ 1—18-ում Հիսուս հակադրում է փարիսեցիների արդարությունը՝ ողորմածությունը, աղոթքը, պահեցողությունը (որոնք լինում էին «բացահայտ» և «մարդկանց ցույց տալու համար») քրիստոնեական արդարության հետ (որը լինում է «թաքուն»): Երեք հակադրություններն էլ սկսվում են ժամանակագրական-ենթադրական նախադասություններով.

Զ 2—«Երբ մեկը ցանկանում է ողորմություն անել».

Զ 5—«Երբ մեկը ցանկանում է աղոթել».

Զ 16—«Երբ մեկը ցանկանում է պահք պահել»:

Նույնպես երեք հակադրություններն էլ ավարտվում են միևնույն հանգերգով.

Զ 4, 6, 18—«և քո Հայրը, որ տեսնում է ծածկապես, կհատուցի քեզ»:

Այս ողջ շարադրանքի շրջանակի հետ կապ չունի, սակայն, Զ 7—15 հատվածը (աղոթքի ժամանակ չշատախոսելու և այն մասին, թե Աստված գիտե մեր կարիքները, Հայր Մերը և վերջին հատվածը՝ թողության մասին): Այս պարագան դասական է այն ձևի համար, որով մտածում է Ավետարանիչը Հիսուսի ընդարձակ խոսքերի համադրության ժամանակ. իր առջև ունենալով «բացահայտ» և «թաքուն» աղոթքի մասին խոսքը, նպատակահարմար է գտել «թաքուն» աղոթքի մասին խոսելիս ասել մի քանի այլ յուրահատուկ գծեր քրիստոնյայի աղոթելու մասին, հատկապես քրիստոնյայի աղոթքի բովանդակության մասին: Այդ իսկ պատճառով էլ գտնվել է 7—15 հատվածը: Այստեղ բացահայտ երևում է մի կողմից ավետարանչի անտարբերությունը պատմականության նկատմամբ և մյուս կողմից՝ նրա կրոնուսուցողական հետաքրքրությունը:

Կարծում եմ, որ այսքանը բավական է ցույց տալու համար Մատթեոսի ավանդած Լեռան քարոզի համադրական և շեշտված ուսուցողական բնույթը: Այնուամենայնիվ այսպիսի համառոտ մի ուսումնասիրության մեջ չի թույլատրվում ավելի ընդլայնվել: Լեռան քարոզի նման հավաքածուների ծրագրված համադրական բնույթը որևէ կասկածի տակ չի կարող դրվել: Շատ մեկնիչներ հաստատում են Լեռան քարոզի շեշտված ուսուցողական բնույթը: Մինչդեռ ուրիշներ մերժում են այդ: Krister Stendahl-ը, օրինակ, պնդում է, թե ըստ Մատթեոսի Ավետարանը ուսուցողական գիրք չէ՝ ո՛չ լայն, ո՛չ նեղ իմաստով և ո՛չ էլ ծիսական ընթերցումների ժողովածու՝ եկեղեցական հավաքույթների օգտագործման համար (ինչպես վերջին տասնամյակում շատ մոդայիկ է դարձել այդպես անվանել Ավետարանները), այլ մի օժանդակ ձեռնարկ Եկեղեցու ուսուցիչների և առաջնորդների ձեռքին՝ ժողովրդի ուսուցման և ղեկավարման համար: Stendahl-ը նույնիսկ ըստ Մատթեոսի Ավետարանը համարում է ոչ թե մեկ անձի, նոր հավատքի փոխված մի բաբբիի, այլ մի դպրոցի՝ Սուրբ Մատթեոսի[8] դպրոցի աշխատանքի արդյունք:

ժամանակակիցներից (բողոքական և կաթոլիկ) շատերը ընդունում են, թե երկու դեպքերում էլ ներկայացված է Հիսուսի նույն քարոզը:

[6] Փակագծերում տրված համարները համապատասխանում են հայերեն Նոր Կտակարանին (տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1975 թ.):

[7] Այս մասին տես նաև
ա) W. D. Davies-ի գիրքը
բ) **Jaques Dupont,** Les Beatitudes. Le Probleme Litteraire - Les deux Versions du Sermon sur la Montague et les Beatitudes. Bruges, 1958, t. II. La Bonne Nouvelle, Paris, Gabalda, 1969.
գ) **R. Bultmann,** Die Geschichte der Synoptischen Tradition[3], Göttingen, 1957, էջ 160.

[8] **Krister Stendahl.** The School of St. Matthew, and its Use of the Old Testament, Philadelphia, 1968, էջ 25-35.

Անշուշտ այստեղ չենք կարող քննական վիճաբանության մեջ մտնել այս տեսակետի հետ: Կարող ենք ասել, սակայն, որ այս կամ այն տեսակետը ընդունելու պարագային իսկ հստակ և անկասկածելի է Լեռան քարոզի ծրագրային համադրական բնույթը:

Եզրակացնելով, Լեռան քարոզը մի քարոզ է՝ կազմված Հիսուսի վարդապետություններից, համադրված ավետարանչի կողմից և ունի ծրագրային բնույթ՝ ցույց տալու Հիսուսի պատկերը իբրև Նոր Արդարության Ուսուցչի:

Բ. Իսկ այժմ մի քանի խոսք Լեռան քարոզի պատմական խնդրի մասին: Այդ խնդիրը ունի երկու հարցադրում: Առաջինը վերաբերում է այն պատմական պատճառներին, նախապայմաններին, որոնք առաջնորդեցին Մատթեոսին մի այդպիսի համադրություն կազմելուն: Երկրորդ հարցադրումը հետևյալն է. ավետարանչի համադրության ետևում ի՞նչ կարող ենք ասել Հիսուսի իրական այն հայացքների մասին, որոնք ուսուցանել է Հիսուս Լեռան քարոզում տեղ գտած իր խոսքերում: Այստեղ պիտի տանք այս երկու հարցադրումների ամենահամառոտ և պարզագույն մեկնությունը:

Արտահայտվել են բազմաթիվ կարծիքներ Լեռան քարոզի համադրության պատճառների մասին, որոնցից ամենահիմնականները, կարծում ենք, հետևյալներն են.

1) Արդեն խոսվեց եբրայական հնգամատյանի հետևությամբ արված ըստ Մատթեոսի Ավետարանի 5 բաժանումների մասին, ինչպես նաև Հիսուսի մասին՝ իբրև Նոր Մեսիայի: Որպեսզի ճիշտ հասկանանք ավետարանչին, պետք է փոխադրվենք ետ՝ իր ժամանակաշրջանը: Գրում է իր Ավետարանը Հիսուսի մահից մի քանի տասնամյակ հետո հունախոս հրեա քրիստոնյաների համար, հավանաբար Պաղեստինի Կեսարիայում, կամ Անտիոքում և կամ այլուր: Ապրելով հուդայական միջավայրում, ցանկանում է նոր կրոնին հարած իր ազգակիցներին բացատրել, թե ի՞նչ կապի մեջ է Նոր Օրենքը Հինի հետ, ցույց տալով միաժամանակ Նորի գերազանցությունը Հինի նկատմամբ: Այդ ոչ միայն Եկեղեցու անդամներին կարող էր ամրապնդել, այլ նաև բարյացակամ հրեա ընթերցողներին կարող էր հրավիրել նոր հավատքին:

Այս մեկնության թույլ կողմը կայանում է նրանում, որ Լեռան քարոզի բավականին շատ հատվածներ (9 երանիները,— Ե 3-12, Զ-Է գլուխների պարունակությունն) կապ չունեն Հին Հայտնություն—Նոր Հայտնություն, Հին Հայտնիչ—Նոր Հայտնիչ թեմայի հետ (Ե 17-48):

2) Այդ պատճառով այլ մեկնիչներ առաջարկեցին այլ պատմական երևույթ՝ իբրև պայման Լեռան քարոզի համադրության: Դա Գնոստիցիզմի հարուցած բազմաթիվ վտանգների դիմագրավման փորձն էր Մատթեոսի կողմից: Ասվում է, թե այդպիսի մի վտանգավոր թշնամու ներխուժումը դիմագրավելու համար Մատթեոսը մտածել է, թե անհրաժեշտ է քրիստոնեական ազատությունը կաշկանդող Հին Օրենքին՝ հակադրել Նոր Օրենքը[9]: Գնոստիկների՝ քրիստոնյայի ազատության մասին ասված այն քարոզությունների դեմ, թե քրիստոնյան կարող է անել այն ամենը, ինչ որ ցանկանա, որովհետև Հիսուս Քրիստոսի Մահվամբ և Հարությամբ ձեռք է բերել խորհրդավոր «գնոսիսը», որ բավական է իր փրկության համար, Մատթեոսը համադրում է Նոր, Քրիստոնեական արդարության մասին մի ծրագրային քարոզ (քաղված Հիսուսի խոսքերից), որը ոչ միայն չի մերժում մովսիսական Օրենքը, այլև այն «լրացնում» է: Ուրիշ խոսքով, այս քարոզով ավետարանիչը ցանկանում է շեշտել (գնոստիցիզմի դեմ), թե քրիստոնեությունը որևէ փիլիսոփայական ձև չէ, գաղտնի ուսմունք չէ, կեղծ մարգարեական-փրկչաբանական կապակցություն չէ, այլ մի նոր Հայտնություն է՝ ամուր կերպով հիմնված փրկության պատմության և Հին Կտակարանի նկարագրի վրա, որը ոչ միայն շարունակում է, այլ նաև ամբողջությամբ վերանորոգում:

Այս տեսակետը նույնպես ունի թույլ կողմեր. ա) նախ և առաջ պետք է նշել, թե դեռ պատմականորեն հաստատված չէ, թե Գնոստիցիզմը այն տարիներին, երբ շարադրվեցին Հիսուսի խոսքերը, զարգացել էր այն աստիճան, որ կազմեր այդքան մեծ վտանգ Եկեղեցու համար: Անշուշտ, երբ գրվեց ըստ Մատթեոսի Ավետարանը, Գնոստիցիզմի վտանգը երևելի էր: Մյուս կողմից, հրեական ավանդությունից հայտնի է, որ ռաբբիների աշակերտները հուշագրում էին իրենց ուսուցիչների խոսքերը, շատ հաճախ մեծ ճշգրտությամբ, և այդպիսով այդ խոսքերը, որոնք մեծ մասամբ մովսիսական Օրենքի մեկնություններ էին, ավանդվում էին սերնդից սերունդ: Այս ուսուցիչների մեկնություններն անհրաժեշտ

[9] Ըստ Bornkamm-ի (Տես վերևում, էջ 1048) Մատթեոսը Ե 18-ը գրել է հունական ուղղության այն ուսուցիչների դեմ, ովքեր արհամարհում էին Օրենքը:

և թանկագին Լին կյանքի ամենօրյա խնդիրների դիմագրավման համար: Բարբոնական գրականությունը, որ սկսվեց գրվել մ.թ. Բ դարի վերջից, պարունակում է այս ուսուցիչների ավանդությունները: Սրանց մեջ յուրահատուկ տեղ են գրավում «Հայրերի խոսքերը»[10]: Պետք է, ուրեմն, հասկանանք շատ բնական, որ Հիսուսի աշակերտները նույնպես նույն կերպ վարվեցին իրենց Ուսուցչի խոսքերի և վարդապետությունների հետ: Անհրաժեշտ չէր, որպեսզի երևան գար Գնոստիցիզմը, որպեսզի կազմվեին Հիսուսի վարդապետությունների հավաքածուներ բարոյական բովանդակությամբ: Եկեղեցու ամենօրյա ջատագովական և ուսուցողական անհրաժեշտությունները արդարացնում են ամբողջությամբ նման հավաքածուների ստեղծումը, նախ փոքր, ապա ավելի ընդարձակ: բ) Լեռան քարոզի բովանդակության շատ հատվածներ (օր. Զ 1-18, Է 1-12) չեն համապատասխանում այս պատճառաբանությանը:

3) Այսպես ստեղծվեց մի այլ կարծիք. Երուսաղեմի և տաճարի կործանումից առաջ Ռաբբի Johannan ben Zakkai-ն, որը մի խաղաղարար փարիսեցի էր, անցնում է Հորդանան գետի մյուս կողմը և այնտեղ հիմնում առաջին ռաբբիական դպրոցը, Յամնիա քաղաքում: Քաղաքական ողբերգական իրադարձությունները և սարսափելի կործանումը, որ կրեց հրեա ժողովուրդը, հետու վանեցին ամեն մի հայտնութենական երազ Հռոմի դեմ ապստամբելու և նրա լծից ազատվելու վերաբերյալ: Բարեպաշտ իսրայելացու ողջ կրոնական կյանքը պետք է այլևս համաձուլվեր Օրենքի ճանաչման, Օրենքի ճշգրիտ մեկնության և գործադրման հետ. այդպես միայն հրեան կարող էր վերակենդանանալ: Սրբարանը և քահանայական դասակարգը ոչնչացվել էր: Ոչնչացվել էին նաև երազներով տարված բոլոր կրոնական խմբակները, որոնք պատերազմ էին հայտարարել Հռոմի դեմ: Մնացել էր միայն Օրենքը և Օրենքի Յամնիայի ռաբբի մեկնիչները, որոնք հետապնդում էին իրենց ազգի վերաենդանացումը հիմնել Հին Օրենքի վրա: Ի հակադրություն դրան, ավետարանիչը ցանկանում է ցույց տալ Հին Օրենքի և նրա՝ ռաբբիների կողմից արվող մեկնության անբավարարությունը, Հին Արդարության անբավականությունը ժողովրդի փրկության համար: Այդ փրկությունը կարող է և պետք է լինի ոչ միայն հրեաների, այլև բոլոր ազգերի սեփականությունը, այն մեկնությամբ, որ տվեց Հիսուսը Հին Արդարությանը: Հին Արդարության Հիսուսյան մեկնությունը ժողովրդից պահանջում է շատ ավելին, քան ռաբբիների մեկնությունը: Ամեն բանից առաջ, սակայն, փրկության համար անհրաժեշտ է Նոր Արդարության քարոզչի՝ Հիսուսի անձնավորության ճանաչումը և ճշգրիտ մեկնությունը:

Այս վերջին տեսակետը բավականին դրական կողմեր ունի: Պետք չէ, սակայն, անտեսել այն շատ օգտակար տարրերը, որ պարունակում են նախորդ երկու տեսակետները: Քրիստոնեությունը՝ Նոր Արդարությունը՝ Եկեղեցին, իբրև հուդայիզմի ճիշտ վերանորոգում, Նոր կյանքը իբրև Հինի ճիշտ մեկնություն և վերանորոգում՝ 70 թ. կործանումից անմիջապես հետո հուդայիզմի խնդիրների լուծման ռաբբիականության ջանքերի դիմաց, քրիստոնեությունը իբրև կյանք և գործողություն, ոչ իբրև աստվածա-իմաստասիրություն և ֆանտազիա՝ Գնոստիցիզմի ձևով, Նոր Հայտնությունը իբրև «լրում» Հինի, Նոր Հայտնիչը իբրև վերջին ազատարարը և առաջնորդը, --բոլոր այս ամենը միասին պատճառներ էին, որ կարող էին Մատթեոսին առաջնորդել Լեռան քարոզի համադրումին:

Այժմ գանք պատմական խնդրի երկրորդ հարցադրմանը. ավետարանչի համադրության ետև ի՞նչ կարող ենք ասել Հիսուսի վարդապետության մասին: Պատասխանն է՝ շատ բան: Այստեղ նշում ենք միայն կարևոր կետերը.

1) Ողջ քարոզից հստակորեն երևում է, որ ինչ-որ մի նոր բան է մտնում մարդու կրոնական պատմության մեջ: Լեռան քարոզում մարդու հարաբերությունը իր Աստուծո հետ հարաբերություն է «դեմք առ դեմք» (դեմ հանդիման): Ամենակարևորը մարդու համար իրեն տրվող Հայտնությունն է, Հայտնություն այն մասին, թե մարդը ի՞նչ է փնտրում այս աշխարհում, և ո՞րն է իր ապագան: Լեռան քարոզում տեղ գտած բոլոր ուսուցումների մեջ տեսանելի է կատարելության կնիքը:

2) Այդ ուսուցումներում շեշտված է գալիք Աստուծո թագավորության գաղափարը, որը մարդկային կյանքում մի բոլորովին նոր շրջան է բանալու: Բոլոր ուսուցումներն էլ սկսվում են այդ գաղափարից և հանգում դրան:

3) Միայն Հիսուսը կարող էր նկարագրել Նոր ուսմունքի բովանդակությունը (Երանիներ) այնպես, ինչպես նկարագրված է քարոզի մեջ, ցույց տալու իր ժամանակակից դպիրներին Իսրայելի փրկության համար Օրենքի իրենց մեկնության անբավա-

[10] Հ. Ա. Ստեփանոս, Հայրերի Խոսքեր. Թեսալոնիկի, 1961.

բարությունը, ցույց տալու նրանց կյանքը բնութագրող կեղծավորությունը և մակերեսայնությունը, իրենց կյանքի ամենօրյա բարեպաշտության գործնական կյանքում:

4) Նոր արդարության մեջ գոյություն ունի մի բացարձակություն մարդուց պահանջվածի մեջ. Աստված պահանջում է ողջ մարդուն, ոչ թե իր մի մասը միայն: Կա մի խորը խորհուրդ Հիսուսի ուսուցումների ետևում: Այդ խորհուրդը կապված է Հիսուսի իշխանության հետ (Եվ ես ասում եմ ձեզ...), իր դեմքի, գործի, մահվան և Հարության հետ:

Հունարենից թարգմանությունը՝
ԵՋՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ